



ԴԻՄԱԿԱՅԵԼ COVID-19-ԻՆ

Գլենդելում COVID-19-ի տարածումը կանխելու համար, մարդիկ Գլենդելում պետք է կրեն Դեմքը ծածկող միջոցներ՝ տանից, բնակության կամ մշտական կեցության վայրից դուրս, բացառությամբ հետևյալ դեպքերի:

- Դուք մենակ եք կամ միայն Ձեր տան անդամների հետ
- Երկու տարեկանից ցածր երեխաները (ներառյալ նորածինները)
- Շնչառական խնդիրներ ունեցող երեխաները
- Որոշակի հաշմանդամություն ունեցող, թույլատրված գործունեությամբ զբաղվող անձինք ազատվում են դեմքը ծածկող միջոցներ կրելուց, եթե հետևում են սոցիալական հեռավորության պահանջներին եւ կառավարության բոլոր հրահանգներին, ու Լոս Անջելեսի վարչաշրջանի Հանրային Առողջապահության կանոնակարգին
- Եթե Դեմքը Ծածկող միջոցները, ըստ դաշնային, նահանգային, տեղական օրենքի կամ աշխատավայրի կանոնադրության, վտանգ են առաջացանում աշխատանքի ժամանակ
- Յուրաքանչյուրի համար, ով շնչառության հետ կապված խնդիրներ ունի, կա՛մ անգիտակից վիճակում է, կա՛մ անկարողունակ է, կա՛մ չի կարող հեռացնել Դեմքը ծածկող միջոցն առանց օգնության
- Կառույցների ներսում, պայմանով, որ տվյալ տարածքում առնվազն վեց ոտնաչափ տարածություն կա եւ մյուսները, հավանաբար, մի քանի օր նույն տարածքում մեջ չեն լինի: Անհատների դեմքը ծածկող միջոցները պետք է լինեն տեսանելի եւ պատրաստ, որպեսզի ծածկեն բերանն ու քիթը, երբ մյուսները գտնվում են 30 ոտնաչափի հեռավորության վրա
- Երբ անձը մենակ է մասնավոր գրասենյակում կամ տարածքում, որը չի կիսում մեկ այլ մարդու հետ, եւ ամենայն հավանականությամբ, այցելու չի ունենա առանց նախնական պայմանավորվածության
- Երբ անձը մեքենայում է միայնակ կամ նույն տան անդամի հետ, մինչ այն պահը, քանի դեռ չպետք է իջեցնի մեքենայի ապակին որեւէ նպատակով՝ հաղորդակցվելու առաջին պատասխանողի, սննդի ծառայության աշխատակիցների, կամ այլոց հետ, ովքեր նույն տան անդամ չեն:
- Երբ ուտում է կամ խմում՝ ներսում կամ դրսում